

**ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2017 թվականի
սեպտեմբերի 25-ին կայացած Գիտական Խորհրդի N1 նիստի**

Նախագահ – Մ.Ա. Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս. Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 32-ը (ցուցակը կցվում է)

Դեկան Մ.Ա. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ.

1. 2017-2018 ուստարվա ֆակուլտետի Գիտական Խորհրդի աշխատանքային պլանի նախագծի քննարկումն ու հաստատումը: /զեկ. գիտ. քարտուղար Ե.Ս. Մանուկյան/
2. 2016-2017 ուստարվա առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի 1-ին և 2-րդ լուծարքային շրջանի արդյունքները
/զեկ. փոխդեկան Ա.Թ. Գրիգորյան/
3. 2017/2018 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքները
/զեկ. փոխդեկան Վ.Պ. Վարդանյան/
4. Գիտական կոչման շնորհում
5. Գիտական հաղորդում
6. Ընթացիկ հարցեր

1. **ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտքարտուղար Ե.Ս. Մանուկյանի հաղորդումը 2017-2018 ուստարվա ֆակուլտետի Գիտական Խորհրդի աշխատանքային պլանի վերաբերյալ: Ներկայացված աշխատանքային պլանի նախագծում ընդգրկված են ֆակուլտետում ընթացող և սպասվելիք բոլոր նախագծերի քննարկումները, ներառված են սահմանված թվով գիտական հաղորդումներ, ինչպես նաև ամբիոնի վարիչների հաշվետվություններն ըստ սահմանված ժամանակացույցի (2017-2018 ուստարվա ֆակուլտետի գիտ. խորհրդի աշխատանքային պլանը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. պրոֆ. Մ.Մանասյանն իր խոսքում առաջարկեց ֆակուլտետի և ամբիոնների աշխատելառճի մեջ փոփոխություններ կատարել, քանի որ ԵՊՀ-ն

քավականին հետ է մնացել TOP ԲՈՒՀ-երի ցանկից և աշխատանքային պլանում որպես քննարկման հարց ավելացնել երկու քննարկման կետ 1.«Աշխարհագրական կրթության բարեփոխման ուղիները Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում», և 2.«Ուսումնամեթոդական խորհրդի աշխատանքի բարելավման ուղիները Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում»:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանը նշեց, որ աշխատանքային պլանում առաջարկություններ ավելացնելն առավել արդյունավետ է հարցը ամբիոնի նիստին քննարկելուց հետո և առաջարկեց Մ.Մանասյանի ներկայացրած հարցերը դնել բաց քվեարկության:

Նախագահ Մ.Ա.Գրիգորյանը բաց քվեարկության դրեց պրոֆ.Մ.Մանասյանի առաջարկությունը: Քվեարկության արդյունքում

Կողմ-1

Դեմ - 31

ՈՐՈՇԵՑԻՆ. պրոֆ. Մ.Մանասյանի առաջարկությունը չընդգրկել աշխատանքային պլանի նախագծի մեջ՝ այն տեղափոխելով ամբիոնային նիստերի քննարկման:

2. ԱՄԵՑԻՆ. Փոխդեկան Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը 2016-2017 ուս.տարվա առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի 1-ին և 2-րդ լուծարքային շրջանի արդյունքների վերաբերյալ: Նա մանրակրկիտ կերպով ներկայացրեց լուծարքային շրջանների ժամկետները և անվանական ներկայացրեց առարկայական պարտք ունեցող ուսանողներին ըստ մասնագիտության և կուրսերի: Հաղորդման ընթացքում Ա.Գրիգորյանը նշեց նաև, որ անցկացվող լուծարքային քննություններն ընթանում են սահմանված կարգով՝ հանձնաժողովների ամբողջական կազմի մասնակցությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ցանկացողներ չեղան

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

3. ԱՄԵՑԻՆ. Փոխդեկան Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը 2017/2018 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքների վերաբերյալ: Վ.Վարդանյանն ըստ մասնագիտությունների ներկայացրեց հատկացված տեղերի և փաստացի

ընդունված ուսանողների թիվը, ըստ որի **սերվիս** մասնագիտությանը հասկացված 120 տեղից ընդունվել են 70 ուսանող, **քարտեզագրություն և կադաստրային գործ** մասնագիտության 40 տեղի փոխարեն՝ 44 ուսանող, **աշխարհագրություն** մասնագիտության 65 տեղի փոխարեն՝ 45 ուսանող և **երկրաբանություն** մասնագիտության 50-ի փոխարեն՝ 17 ուսանող: Ելնելով ներկայացված տվյալներից Վ.Վարդանյանը նշեց նաև, որ այս տարի մոտ 100 ուսանող պակաս են ընդունվել ֆակուլտետ: Վարդանյանը ներկայացրեց նաև Մինչբուհական վարչության կողմից մշակված մի գրություն, որը կնպաստի ԵՊՀ-ի, մասնավորապես՝ մասնագիտության հանդեպ դիմորդների հետաքրքրության մեծացմանը ըստ որի

- Պատրաստել ամբիոնների մասին տեսասկավառակ, որտեղ դիմորդը կարող է տեսնել մասնագիտության արդիականությունը և համապատասխան ֆակուլտետ դիմելու բոլոր դրական և շահավետ կողմերը: Նկարահանումները կազմակերպվելու են դեկտեմբեր ամսին:

- Հրատարակել աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը ներկայացնող բուկլետներ, որը կպարունակի մասնագիտությունների մասին անհրաժեշտ տեղեկատվությունը և կներգրավի դիմորդին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Մանասյանը իր խոսքում նշեց, որ ներկայիս ուսանողը գալիս է ավելի շատ ԵՊՀ-ի ուսանող լինելու համար և ոչ թե լավ աշխարհագետ դառնալու համար: - Ես կարծում եմ որ ամենալավ գովազդը դա կրթության որակի բարձրացումն է,- ասաց Մ.Մանասյանը: Մ.Մանասյանը տեղեկացրեց նաև, որ հետագա նիստերից մեկում կներկայացնի իր կողմից մշակված հայեցակարգը, որը համապատասխանում է այսօրվա պահանջների կրթական չափորոշիչներին:

Ա.Առաքելյանը, հայտնելով իր կարծիքը, նշեց շրջանների դպրոցներում աշակերտների հետ հանդիպումների էֆֆեկտիվությունը՝ պոտենցիալ ուսանողներ ունենալու հարցում: - Լավ կլիներ հարող մասնագիտություններ ներկայացնող մասնագետները՝ աշխարհագետ և երկրաբան, միասին ներկայացնեն ֆակուլտետը,- խոսքի վերջում հավելեց նա:

Ս.Հայրոյան – Իր խոսքում Ս.Հայրոյանը ասաց, որ բոլոր բնական գիտությունների ֆակուլտետներում դիտվում է դիմորդների քանակի խնդիր: -

Կարծում եմ հարցը համակարգային քննարկման կարիք ունի և գովազդը հարցի լուծում չի,-ասաց Հայրոյանը:

Թ.Վարդանյան – Բնական գիտություններում դիմորդ ունենալու խնդիրը կա և խնդիրը հետզհետե ավելի է սրվելու: Շատ կարևոր է գովազդի խնդիրը և մինչբուհական վարչության կողմից ձեռնարկած քայլերը նկարահանումների վերաբերյալ շատ ողջունելի են և տեղին, - ասաց Թ.Վարդանյանը: Իր խոսքում Վարդանյանն առաջարկեց նաև մասնագիտության վերաբերյալ Power Point ծրագրով ստեղծել պրեզենտացիոն նյութեր, որոնք կտեղադրվեն կայքում, ինչն ավելի էֆֆեկտիվ կլինի քան բուկլետների բաժանումը: Դիմորդը կարող է տեսնել այն բոլոր ծրագրերը և տեսանյութերը, որոնք մանրամասնորեն կներկայացնեն մասնագիտությունը, լաբորատորիաները, ինչպես նաև դաշտային պրակտիկաների անցկացման ընթացքը: Այս նյութերը դիմորդին կօգնեն ճիշտ կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում: «Աշխարհագրություն» մասնագիտության որակի բարձրացման ուղղությամբ բավականին աշխատանք է տարվել և դեռ շատ անելիքներ կան: - Մ.Գրիգորյանի անմիջական մասնակցությամբ զեկուցագրով դիմել ենք ռեկտորատ, «Պատանի աշխարհագետի դպրոց» բացելու խնդրով: Տարվող աշխատանքների շարքին կարելի է դասել նաև այն, որ մենք հասանք նրան, որ ընդգրկվեցինք օլիմպիադային մասնակից երկրների ցանկում:

Մ.Գրիգորյան – Դիմորդների թվի խնդիրն ունի 2 տարբեր փոխկապակցված կողմեր՝ 1. շրջանավարտների փոքր թիվը՝ 9000 շրջանավարտ և 2. ՀՀ-ում ԲՈՒՀ-րի մեծ թիվը՝ 81: Ուսանողի թվաքանակի հարցում դեմոգրաֆիական վիճակն ամենաորոշիչն է: Ուսանողն ընտրում է մասնագիտությունը համեմատելով նաև ԲՈՒՀ-րի ուսման վարձավճարները՝ անկախ ամենաբարձր որակ ունեցող կրթական ծրագրերից: Խոսելով աշխարհագրության միջազգային օլիմպիադայի մասին Մ.Գրիգորյանն ասաց,- Ցավոք մեր շրջանավարտներից շատերը գերազանց տիրապետում են առարկային և ոչ թե անգրելեր լեզվին, սա է միջազգային օլիմպիադային մասնակից չունենալու հիմնական պատճառը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունելի գիտություն

4. *ԼՄԵՑԻՆ* – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը Սերվիսի ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Սարգիս Սամվելի Քելյանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վարդանյանը նշեց, որ Ս.Քելյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի կոչում ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Մրցութային հանձնաժողովը որոշել է հարգել Ս.Ս.Քելյանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խարհրդին դոցենտի կոչման մրցույթին մասնակցելու և երաշխավորություն ստանալու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ս.Ռ.Սուվարյանը, Ա.Ռ.Ավագյանը: Նրանք բարձր գնահատելով Ս.Քելյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում, գտնում են, որ նա արժանի է դոցենտի կոչում ստանալու և առաջարկեցին հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Արամայիս Ավագյան, անդամներ՝ Ժորա Աչոյան և Սամվել Առաքելյան:

ԼՄԵՑԻՆ – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ պրոֆ.Ա.Ավագյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 32-ը: Սարգիս Քելյանին դոցենտի կոչում շնորհելու համար կողմ են քվեարկել 32-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և երաշխավորել Սարգիս Սամվելի Քելյանին՝ դոցենտի գիտական կոչումը շնորհելու:

5.1 *ԼՄԵՑԻՆ.* Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հեռակա ուսուցման նախկին ասպիրանտ Հրաչուհի Սեյրանի Գալստյանի գիտական հաղորդումը «ՀՀ տարածքում օդի ջերմաստիճանի և մթնոլորտային տեղումների տարածաժամանակային բաշխման օրինաչափությունների

վերլուծումը և գնահատումը կլիմայի փոփոխության համատեքստում»
(ԻԴ.03.01-Ֆիզիկական աշխարհագրություն) թեմայի վերաբերյալ:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.

դոց. Ս.Հ.Հայրոյան – Ո՞րն է Ձեր աշխատանքի գիտական նորույթը: Նորույթ ասելով պետք է ներկայացնեք վերջնական արդյունք և ոչ թե գործընթաց: Ինչպիսի՞ կապ էք ստացել դիտարկումների արդյունքում: Արդյո՞ք աշխատանքում որևէ համեմատություն է արվել այլ լեռնային երկրների հետ:

պրոֆ.Վ.ՊՎարդանյան – Ինչո՞վ են տարբերվում աշխատանքի արդյունքում ստացված տվյալները Օդերևութաբանական վարչության ունեցած արդյունքներից և եթե տարբերվում է, ապա ո՞րն է առավերությունը: Արդյոք ներկայացված մեթոդը նորույթ է և կարող է կիրառելի լինել Օդերևութաբանական վարչության տվյալները վերծանելիս:

դոց. Ժ.Ա.Աչոյան – Ինչո՞վ էք պայմանավորել կոնկրետ ժամանակահատվածի (1961-2012) ընտրությունը: Աշխատանքը կատարելիս արդյո՞ք կատարվել է կանխատեսում:

դոց.Պ.Գ.Դավթյան – Աշխատանքում նշեցիք որոշ տեղամասերում ջերմաստիճանի և տեղումների դիտված փոփոխություններ և շեղումներ, արդյո՞ք պարզել էք այդ փոփոխությունների պատճառը:

պրոֆ. Մ.Մանասյան – Արդյո՞ք կփոխվի աշխատանքի իմաստը վերնագրում “տարածաժամանակային” բառը փոխելով “տարածական և ժամանակային” արտահայտությամբ: Արդյո՞ք աշխատանքում կա բացահայտված դիտարկված երևույթների զարգացում միաժամանակ տարածության և ժամանակի մեջ: Արդյո՞ք աշխատանքը քննարկվել է ՀայՊետշիդրոմետ վարչությունում:

դոց. Լ.Ա.Հախվերդյան – Քանի՞ կայան է աշխատել 1961-1990 թվականների ընթացքում: Աշխատանքում օգտագործել էք արդյո՞ք արբանյակային տվյալներ և արդյո՞ք կանխատեսում էք տեղումների տեսակը (անձրև, կարկուտ):

Բոլոր հարցերին Հ.Գալստյանը տվեց իր հանգամանակից պարզաբանումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

պրոֆ. Լ.Ա. Հախվերդյան – Հ.Գալստյանի ներկայացրած աշխատանքը բավականին տպավորիչ է: Խնդիրը դրված էր, այն լուծելու մոտեցումները արդիական: Խոսքի ավարտին առաջարկեց երաշխավորել հրապարակային պաշտպանության:

դոց.Ս.Ռ.Սուվարյան – Թեման դրված է, խնդիրներն առաջադրված: Ելույթում Ս.Սուվարյանն առաջարկեց կոնկրետացնել նյութերի կիրառման ոլորտը տնտեսության ո՞ր բնագավառում են դրանք ավելի կիրառելի: Առաջարկեց ավելացնել աշխատանքի կիրառական նշանակությունը և վերնագրում կատարել որոշ փոփոխություններ՝ «տարածաժամանակային» բառը փոխելով «տարածական և ժամանակային»:

պրոֆ.Թ.Գ.Վարդանյան - աշխատանքը բավականին բարդ էր և տարրդունակ՝ հաշվարկային մեթոդների քանակի առումով: Մեթոդը թույլ տվեց բացահայտել այն գաղափարը, որ նախկինում ջրաբանական և օդերևութաբանական դիտարկումները շարքերով չեն իրականացվել: Վ.Վարդանյանն առաջարկեց երաշխավորել աշխատանքը դնել հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Երաշխավորել Հրաչուհի Սեյրանի Գալստյանի ներկայացրած աշխատանքը հրապարակային պաշտպանության:

5.2 ԼՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հայցորդ Արմեն Աշոտի Հովսեփյանի գիտական հաղորդումը «Սյունիքի մարզի լեռնային գեոհամակարգերի վրա հանքագործական արդյունաբերության ազդեցությունների տարածական ասպեկտները» (ԻԴ.04.01.«Երկրաբնապահպանություն») թեմայի վերաբերյալ:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.

դոց.Պ.Գ.Դավթյանը – Ձեր աշխատանքում պարզել էք արդյո՞ք թե ինչ հիվանդություններ են սրվել Սյունիքի մարզում ծանր մետաղների ազդեցության հետևանքով:

դոց.Ս.Ա.Գրիգորյան – Արդյո՞ք արվել է բնածին արատներով հիվանդությունների և շեղումների քանակական համեմատություն մնացած մարզերի հետ: Ունե՞ք արդյոք աշխարհի տարբեր արդյունահանող երկրների հիվանդների քանակական տվյալների դիտարկումներ:

դոց.Շ.Վ.Խաչատրյան – Ո՞րն է աշխատանքի գիտական նորույթը:

պրոֆ.Վ.Պ.Վարդանյան – Ո՞ր ծանր մետաղներն են դիտարկվել աշխատանքում:

պրոֆ.Թ.Գ.Վարդանյան – Արդյո՞ք աշխատանքում կատարվել է ՇՄԱԳ և եթե այո ապա ո՞ր մեթոդներով է այն իրականացվել: Աշխատանքում ներկայացված

թվային տվյալները որտեղի՞ց են վերցված, մասնավորապես՝ օդային ավազանի տվյալները:

դոց.Գ.Փ.Ալեքսանյան – Ինչպիսի՞ ցուցանիշներ եք օգտագործել “Մարդածին ծանրաբեռնվածության քարտեզը” կազմելիս:

Բոլոր հարցերին Ա.Հովսեփյանը տվեց հանգամանալից պարզաբանումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

պրոֆ.Հ.Յա.Սայադյան – Աշխատանքը բավականին բարդ էր: Աշխատանքում հաշվարկներն արվել են ՌԴ հանքավայրային տարածքներում կատարած մեթոդական հաշվարկների հիման վրա: Գիտական նորույթը՝ քննարկվել է Սյունիքի մարզի լեռնային բնահասարակական գեոհամակարգը: Գիտական արժեքն այն է, որ դիտարկվել է համակարգին բնորոշ կառուցվածքայնությունը, որի հիմքում դրված է լանդշաֆտային դիֆերենցացիան: Կատարվել է լուրջ գիտական աշխատանք և առաջարկեց երաշխավորել աշխատանքը դնել հրապարակային պաշտպանության:

պրոֆ.Մ.Գ.Մանասյան – Աշխատանքը բավականին ամբողջական է, որտեղ լիարժեքորեն վերլուծվել է բնահասարակական համակարգը: Աշխատանքում հաջողությամբ համադրվել է 3 մոտեցումները՝ համակարգային, տարածական և տարածաժամանակային:

դոց.Ս.Ռ.Սուվարյան – Կատարված է հսկայական աշխատանք,-ասաց նա: Առաջարկեց ներկայացնել այն բաղադրիչները, որոնք հավասարապես են հեռացված ուսումնասիրման օբյեկտից և շեշտադրումը կատարել տարածականության վրա:

պրոֆ.Թ.Գ.Վարդանյան – Հսկայական ծավալի նյութ է: Ներկայացման որակը այնքան էլ բավարար չէր: Նյութերը “հում”, չմշակված կերպով ներկայացվեցին խորհրդին: Ներկայացման մեջ չերևացին օպտիմալացման ուղիները: Աշխատանքը լավ ներկայացնելու խնդիր կար:

դոց.Ա.Հ.Պոտոսյան – Հսկայական ծավալի աշխատանք է կատարվել: Յուրաքանչյուր թեմա ունի իր մեթոդները, եզրակացությունը կրճատման կարիք ունի, սակայն սեղմելով այն կրճատվում է նաև միտքն ու իմաստը:

դոց.Մ.Ա.Գրիգորյան – Աշխատանքը բավականին հետաքրքիր և արդիական է, բավականին մանրամասնորեն վեր են լուծվել մարզի հանքագործական

արդյունաբերության ազդեցությունների ներկայիս խնդիրները: Ելույթը խմբագրման և ընկալելի դարձնելու խնդիր կա: Մ.Գրիգորյանն առաջարկեց աշխատանքը դնել հրապարակային պաշտպանության

ՈՐՈՇԵՑԻՆ. Երաշխավորել Արմեն Աշոտի Հովսեփյանի ներկայացրած աշխատանքը հրապարակային պաշտպանության:

6. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

6.1 ԼՍԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը <Ղևոնդ Ալիշան>-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ - Աշխարհագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանող Սարգիս Արտյոմի Սարգսյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով Սարգիս Արտյոմի Սարգսյանի ուսման գերազանց առաջադիմությունը, հասարակական ակտիվ գործունեությունը և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ երաշխավորել <Ղևոնդ Ալիշան>-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

6.2 ԼՍԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը <Տիգրան Ջրբաշյան>-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ - Երկրաբանության մագիստրատուրայի բաժնի 2-րդ կուրսի ուսանող Արզիս Գարեգինի Բաբաջանյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով Արզիս Գարեգինի Բաբաջանյանի ուսման գերազանց առաջադիմությունը, հասարակական ակտիվ գործունեությունը և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ երաշխավորել <Տիգրան Ջրբաշյան>-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

6.3 ԼՍԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հայցորդ Արմեն Աշոտի Հովսեփյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի և գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա.Հ.Պոտոսյանը նշեց, որ Ա.Հովսեփյանի ատենախոսական թեզի ղեկավար Լ.Հ.Վալեայանի մահից հետո «Սյունիքի մարզի բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը» թեմայի հաստատման վերաբերյալ 1995թ. ֆակուլտետի գիտխորհրդի որոշումը չի պահպանվել և ատենախոսության թեմա է առաջարկվում «Սյունիքի մարզի լեռնային գեոհամակարգերի վրա հանքագործական արդյունաբերության ազդեցությունների տարածական ասպեկտները» (ԻԴ.04.01.«Երկրաբնապահպանություն»):

ՈՐՈՇԵՑԻՆ – **ա.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հայցորդ Արմեն Աշոտի Հովսեփյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Սյունիքի մարզի լեռնային գեոհամակարգերի վրա հանքագործական արդյունաբերության ազդեցությունների տարածական ասպեկտները» վերնագրով:

բ. Գիտական ղեկավար հաստատել աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Հովհիկ Յախշիբեկի Սայադյանին:

6.4 ԼՍԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Էսամիլ Մոհաջեր Ջաֆարի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի մեջ փոփոխություն կատարելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Էսամիլ Մոհաջեր Ջաֆարի թեկնածուական ատենախոսության «Էկոտուրիզմը Իրանի Գոլեստանի Օստանի առափնյա շրջանում» վերնագրով աշխատանքը վերանվանել և հաստատել «Էկոտուրիզմի զարգացումը Իրանի Գոլեստանի նահանգում» վերնագրով (ԻԴ.03.01.«Աշխարհագրություն»):

Գիտական խորհրդի նախագահ՝

Մ.Ա.Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան